նախագիծ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՎՁՄ-ԳՀԱՊՁԲ-16/20-2

ք. Եղեգնաձոր

«31» հուլիս 2020թ.

<< Վայոց ձորի մարզպետարանը ի դեմս գլխավոր քարտուղար Կ. Սահակյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և Բիզնես Էլիտա ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Հակոբյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **5/հինգ/** օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը.

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **5/հինգ/** օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 1877000 / մեկ մլն ութ հարյուր յոթանասունյոթ հազար /ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:[18] Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **370** օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:[20]

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **5/հինգ/** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

---

[18] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

[20] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց:Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխիքային ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից*

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[22]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը,

---

[21] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սխալանքված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

[22] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է **6/վեց/** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ Վայոց ձորի մարզպետարան	Բիզնես Էլիտա ՍՊԸ
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 5	ՀՀ Գյումրի Հաղթանակի պող,64
ՀՎՀՀ 08907717	ՀՎՀՀ 05519933
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Ինեկոբանկ ՓԲԸ Գյումրի մ/ճ
Հ/Հ 900351000808	Հ/Հ 2050122041991001
Գլխավոր քարտուղար	Տնօրեն՝ Ա.Հակոբյան
Կ. Սահակյան	
----------	----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ
	Digitally signed by HAKOBYAN AIDA 6611690247 Date: 2020.08.05 21:24:52 AMT

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«31» հուլիս 2020թ. Կնքված
ԿՔՄ-ԳՀԱՊՁԲ-16/20 -2 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ապրանքի									ՀՀ դրամ		
									Մատակարարման		
իրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը **	տեխնիկական բնութագիրը *	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հաց ցեն	ենթակա քանակը	ժամկետը***
2	31711240-2	Հաճախումների կառավարման համակարգ	Ապրանքային նշանը՝ Alutek hNAIC ZKT Մակնիշը՝ ASB 6000 IR30 Ztk kr201 MR100 MR101 C3-200 Merkuri Tendo NAIC Արտադրողի անվանումը՝ Alutekh NAIC ZKT	Ներկայացված է ստորև	Կոմպլեկտ	1877000	1877000	1/մեկ/	Ք. Երևանում, Հահումյան 5	1/մեկ/	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանների ուժի մեջ մտնելուց հետո մինչև 01.09.2020թ

***2. Հաճախումների կառավարման համակարգը բաղկացած է՝**

1 Տուրնիկետի փաթեթից(Տուրնիկետ մեխանիկական, քարտ կարդացող տարրերի ղեկավարման վահանակ. քարտ կարդացող մոդուլ, հեռակառավարմամբ եզրի կոճակ. տեղադրման և համակցման աշխատանքներ ներառյալ մոնտաժային նյութեր):

2 Ծրագրային ապահովում Software (100 աշխատակից, 1 օգտվող, Standard տարբերակի-ից

(100 աշխատակից 1 օգտվող, Standard տարբերակ)

3. USB քարտ կարդացող սարքից

4. Ճանապարհի արգելափակչի փաթեթից /**երկու հատ**/(Ճանապարհի արգելափակիչ.մետաղական ձող 3-6մ, հեռակառավարման վահանակ 4հատ, սենսոր IR30 2հատ, հեռախոսային ղեկավարման վահանակ):

5. Քարտ - առանց տպագրության 100 հատ:

6. Ճաղավանդակից:

Աշխատակիցների հաճախումների կառավարման համակարգը.

1. ունի բազմալեզու ինտերֆեյս (հայերեն, ռուսերեն, անգլերեն),

2. ունի կենտրոնացված տվյալների բազա, որը կարող է աշխատել MySQL տվյալների բազաների հետ,

3. ունի հնարավորություն գրանցել առնվազն 100 աշխատակից,

4. ունի API, որը հնարավորություն կտա անհրաժեշտության դեպքում ծրագիրը համակցել կազմակերպության այլ գործող համակարգերի հետ,

5. ավտոմատ կհաշվարկի աշխատակիցների կազմակերպության ներսում անցկացրած ժամաքանակը,

6. հնարավորություն ունի ոչ միայն դիտել, այլ նաև անհրաժեշտության դեպքում խմբագրել աշխատակիցների մուտքերի/ելքերի տվյալները՝ սակայն բազայում պահելով նախնական տվյալը, փոփոխությունը կատարած օգտվողի անունը, փոփոխության կատարման օրը/ժամը,

7. հնարավորություն ունի ներմուծել աշխատակիցների ցանկը հատուկ ձևաչափին համապատասխանող ֆայլից,

8. հնարավորություն ունի ծրագրի յուրաքանչյուր օգտվողի համար սահմանել համապատասխան իրավասություններ,

9. հնարավորություն ունի ստեղծել 1-ից ավել գրաֆիկներ (թե՛ ֆիքսված ժամերով, թե՛ ճկուն ժամերով, թե՛ հերթափոխային) և յուրաքանչյուր աշխատակցին վերագրել իր անհատական գրաֆիկն ըստ շաբաթվա օրերի,

10. հնարավորություն ունի ավտոմատ պատճենել նախորդ շաբաթվա աշխատանքային գրաֆիկը ընթացիկ շաբաթվան,

11. հնարավորություն ունի սահմանել կրկնվող ցիկլային գրաֆիկներ (օրինակ՝ 2 օր աշխատանքային, 1 օր հանգիստ),

12. հնարավորություն ունի սահմանել մինչև 24 ժամ տևողությամբ հերթափոխեր,

13. հնարավորություն ունի գրաֆիկի մեջ սահմանել ընդմիջում, որը պետք է ավտոմատ պակասեցվի աշխատած ժամերից ընդմիջմանը դուրս չգալու դեպքում.

14. հնարավորություն ունի սահմանել մուտքի/ելքի ժամերի և ընդմիջման տևողության համար կլորացման կանոններ.

15. հնարավորություն ունի սահմանել արտաժամյա աշխատանք, ընդ որում թե՛ օրական, թե՛ շաբաթական հաշվարկների միջոցով.

16. հնարավորություն ունի մուտքագրել աշխատակիցների արձակուրդները, գործուղումները, և այլ բացակայության պատճառները.

17. հնարավորություն ունի ներմուծել աշխատակիցների արձակուրդները, գործուղումները, և այլ բացակայության պատճառները հատուկ ձևաչափին համապատասխանող ֆայլից.

18. հնարավորություն ունի կազմել ոչ աշխատանքային (տոների և հիշատակի) օրերի ցանկ.

19. հնարավորություն ունի կազմել հաշվետվություններ ցանկացած ժամանակահատվածի և ցանկացած աշխատակցի համար՝ անհրաժեշտության դեպքում խմբավորելով ըստ ստորաբաժանումների/խմբերի, ընդ որում հաշվետվությունների ցուցակը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալ հաշվետվություններով՝

ուշացումների հաշվետվություն

շուտ ելքերի հաշվետվություն

բացակայությունների հաշվետվություն

բացթողնված գրանցումների հաշվետվություն

շուտ մուտքերի / ուշ ելքերի հաշվետվություն

ամսական աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագիր (տաբել)

աշխատած ժամաքանակի հաշվետվություն (մանրամասն և/կամ ամփոփ)

տոն օրերին աշխատած ժամերի հաշվետվություն

նախատեսված և փաստացի ժամերի համեմատության հաշվետվություն

բոլոր մուտքերի / ելքերի հաշվետվություն

ներկա պահին կազմակերպության ներսում գտնվող աշխատակիցների հաշվետվություն

ժամանակացույցի հաշվետվություն

սխալ գործառնությունների հաշվետվություն

20. հնարավորություն ունի գեներացված հաշվետվությունները տպել, պահել համակարգչում (.PDF, .DOC և .XLS ձևաչափերով) և/կամ ուղարկել էլ.-փոստով,

21. հնարավորություն ունի ավտոմատացնել սարքից տվյալների ստացման, տվյալների բազայի պահեստավորման, հաշվետվությունների գեներացման և էլ.-փոստով ուղարկման գործողությունները,

22. հնարավորություն ունի կատարել տվյալների բազայի արխիվացում և վերականգնում,

23. հնարավորություն ունի կատարել սարքերում գրանցված քարտերի արխիվացում և վերականգնում,

24. հնարավորություն ունի անցակետի մոտ գտնվող համակարգչի էկրանին ցույց տալ քարտով մուտք / ելք կատարած աշխատակցի տվյալները (անուն, ազգանուն, առկայության դեպքում նկար),

25. հնարավորություն ունի զգուշացնել օգտվողներին չկատարված որոշ գործողությունների մասին,

26. հնարավորություն ունի հատուկ ֆայլի արտահանման միջոցով աշխատած ժամերը փոխանցել ՀՇ Կադրեր և Աշխատավարձ ծրագիր:

Տուրնիկետը՝

1. աշխատում է աշխատակիցներին նույնականացնի 125Կհց հաճախականությամբ աշխատող քարտերի միջոցով,

2. ունի առնվազն 30,000 քարտի հիշողություն,

3. գրանցված մուտքերի/ելքերի տվյալները պահի ներքին հիշողության մեջ, ընդ որում հնարավորություն ունի գրանցել առնվազն 100,000 գրառում,

4. գրանցված մուտքերի/ելքերի տվյալները կփոխանցի կենտրոնացված տվյալների բազա լոկալ ցանցի միջոցով,

5. ունի հետևյալ տեխնիկական պարամետրերը՝

Տեսակ՝ Մեխանիկական

Պատյան՝ Չժանգոտվող պողպատ

Գույն՝ Արծաթագույն

Երկարություն՝ 520 մմ

Լայնություն՝ 310 մմ

Բարձրություն՝ 1010 մմ

Մուտքի լարում (AC)՝ 110Վ/220Վ, 50/60Հց

Ելքի լարում (DC) 12 Վ

Տուրնիկետի կողքի ազատ տարածքը կփակվի հետևյալ պարամետրերին համապատասխանող ճաղավանդակներով՝

- մետաղի նյութ - ալյումին

- բարձրություն - 870մմ

- խողովակի հաստություն - 50մմ

- հիմնական շրջանակ - 50մմ

- ճաղավանդակ - 16մմ

- պետք է լինի դոնակ՝ 110մմ երկարությամբ - 1 հատ

- պտտադոնակի դիմաց պետք է լինի Ռ-աձև ճաղավանդակ՝ 1 մետր երկարությամբ – 1 հատ

- ընդհանուր կոնստրուկցիայի երկարությունը կլինի 11.2 գծամետր

- կոնստրուկցիան կհամակցվի և կամրանա գործարանային ալյումինե դետալներով

Ճանապարհի արգելափակչի փաթեթը ունի հետևյալ տեխնիկական պարամետրերը՝

Տեսակ՝ Մեխանիկական- էլեկտրոնային

Պատյան՝ Չժանգոտվող պողպատ

Գույն՝ Սպիտակ-դեղին

Երկարություն՝ 350 մմ

Լայնություն՝ 250 մմ

Բարձրություն՝ 1200մմ

Մուտքի լարում՝ (AC) 100-240 Վ

Էլեկտրոնային մաս

Մուտքի լարում (AC)՝ 220Վ (AC)

Աքսեսուարների համար նախատեսված ելքային լարում՝ 12Վ մաքս 5Վտ

Ավտոմատ փակման ժամանակահատված՝ 1-99 վրկ

Հեռակառավարման վահանակների առավելագույն քանակ՝ 20 հատ

Ճանապարհի արգելափակչի փաթեթը պետք է ներառի՝

Ղեկափակոց - 2 հատ

Հեռակառավարման վահանակ - 4 հատ

Սենսոր IR30 - 2հատ

Հեռախոսային ղեկավարման վահանակ - 2հատ

Քարտերը՝

1. կլինեն առանց տպագրության,

2. քանակ՝ 100 հատ

Մատակարարը

Կիրականացնի համակարգի տեղադրման աշխատանքները,

կապահովի ծրագրային ապահովման ուսուցման ծառայություն 1 այցելությամբ.

Կապահովի համակարգի առցանց և հեռախոսով սպասակման ծառայություն տեղադրումից հետո 6 ամսվա ընթացքում.

անհրաժեշտության դեպքում կներկայացնի վերջին մեկ տարում կատարված նմանատիպ աշխատանքներ:

Երաշխիքը 2 տարի

ԳՆՈՐԴ
ՀՀ Վայոց ձորի մարզպետարան
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 5
ՀՎՀՀ 08907717
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900351000808
Գլխավոր քարտուղար
Կ. Սահակյան

ՎԱՃԱՌՈՂ
Բիզնես Էլիտա ՍՊԸ
ՀՀ Գյումրի Հաղթանակի պող.64
ՀՎՀՀ 05519933
Ինեկոբանկ ՓԲԸ Գյումրի մ/ճ
Հ/Հ 205012204199100 1
Տնօրեն՝ Ա.Հակոբյան

Digitally signed by HAKOBYAN AIDA 6611690247
Date: 2020.08.05 21:25:45 AMT

Հավելված N 2
«31» հուլիս 2020թ. կնքված
ՎՁՄ-ԳՀԱՊՁԲ-16/20-2 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ապրանքի անվանումը	ՀՀ դրամ դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2	31711240-2	Հաճախումների կառավարման համակարգ								1877000	1877000	1877000	1877000	1877000	1877000

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող հավելվածագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:
** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

ԳՆՈՐԴ
ՀՀ Վայոց ձորի մարզպետարան
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 5
ՀՎՀՀ 08907717
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

ՎԱՃԱՌՈՂ
Բիզնես Էլիտա ՍՊԸ
ՀՀ Գյումրի Հաղթանակի պող.64
ՀՎՀՀ 05519933
Ինեկոբանկ ՓԲԸ Գյումրի մ/ճ

Digitally signed by HAKOBYAN AIDA 6611690247
Date: 2020.08.05 21:26:19 AMT

Հ/Հ 900351000808
Գլխավոր քարտուղար
Կ. Սահակյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հ/Հ 2050122041991001
Տնօրեն՝ Ա.Հակոբյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 3
«31» հուլիս 2020թ. կնքված
ՎՁՄ-ԳՀԱՊՁԲ-16/20-2 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

ՀՀ Վայոց ձորի մարզպետարան
Գտնվելու վայրը՝ ք. Եղեգնաձոր, Շահումյան 5
ՀՀ՝ 900351000808
ՀՎՀՀ՝ 08907717

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2020թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 2020թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
«31» հուլիս 2020թ. կնքված
ՎՁՄ-ԳՀԱՊՁԲ-16/20-2 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ **ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի** (այսուհետ՝ Գնորդ) և _____
անվանումը

(այսուհետ՝ Վաճառող) միջև 2020թ. _____ -ին կնքված N ՎՁՄ-ԳՀԱՊՁԲ-16/20 Վաճառողի
պայմանագրի կնքման ամսաթիվը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 2020թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն